

առանց յիշելու որ Ատրնեբսեհ որդին էր Սահլ Սմբատեանի: Կաղանկատուացի շարունակողը կը վկայէ որ «զնա (Ատրնեբսեհը) տարան ընդ այլ իշխանս յերկիրն Պարսից. եւ կալով նորա անդ ամս բազումս տիկինն Սպրամ յառաւել բարեկործութիւնս յաճախէր. եւ մեծածախ տենչմամբ շինէր զնորապանս ի դաւառին Սոդէից ամենապայծառ զարդուք: Եւ իսկոյն դայր Ատրնեբսեհ զերծեալ ի կողմանցն Տաճկաց. եւ խաղաղութեամբ զառժամայն լուծանէ կեանս» (էջ 389):

Ակնարկութիւնը Բուղայի աքսորին մասին է, երբ Սահլ եւ իր որդին Ատրնեբսեհ ուրիշ հայ իշխաններու հետ Սամարա աքսորուեցան 853ին: Մինչ ինք աքսորուած էր՝ իր տիկինը Սպրամ կը զբաղէր շինարարութեամբ: Յայտնի է թէ որն է Սպրամի շինած գնորավանս ի գաւառին Սոդէից:

Ատրնեբսեհի աքսորը, կալով նորա անդամս բազումս, չի կրնար հինգ տարիէն աւելի ըլլալ: Ստեփաննոս Օրբէլեան՝ Տաթևի սահմանաց մասին վճռադրի մը ստորագրողներուն շարքին կը յիշէ նաեւ «Մեք Գրիգոր եւ Եսայի եւ Ատրնեբսեհ՝ Աղվանից իշխանք, վկայ եմք այսմ վճռի» (էջ 234): Ան կու տայ եւ թուականը Հայոց 355 կամ մեր 906ը: Ուրեմն զերեղարձէն՝ 858էն՝ զրեթէ յետուն տարի վերջ դեռ ողջ էր Ատրնեբսեհ:

Սահլի դարձին մասին վկայութիւն չը կայ: Պէտք է խորհիլ որ ան աքսորի մէջ մահացաւ: Իր իշխանութեան գլուխը անցաւ Ատրնեբսեհ, որ 906ին դեռ ողջ էր եւ խաղաղութեան մէջ մեռաւ:

Ատրնեբսեհի որդիներուն համար Կաղանկատուացի շարունակողը կը վկայէ. «Լինին սորա (Ատրնեբսեհի) որդիք Գրիգոր եւ Ապուսէթ. Գրիգոր շինէ զՀաւախաղացի բերդն, եւ յայն կողմն ձգէ զձեռն իւրոյ իշխանութեանն» (էջ 389): Հաւախաղացի այժմ կը նոյնացուի Սագսըղամ-գալէսի հետ եւ կը գտնուի Մեծիրանից վանքին շրջան: Պատմիչը կը շարունակէ. «Եւ Գրիգորի լինին որդիք

հինգ, յորոց երէց որդին Ապուսէթ սպանի յաղակցէն Սմբատայ» (անդ): Ապուսէթ սպանութեան մասին ինքն Կաղանկատուացին ալ կը վկայէ ըսելով. «Իսկ յետ չորից ամաց, յորում տարեմուտն ի սրբումն հանդիպէր Պասեղին. օր. սպանանի Պօլի (նոյն Ապուսէթի հետ: Յ. Ք.) Աղուանից իշխանն Հայկաղուն (այսինքն Եռանշահիկ, Յ. Ք.) յիւրմէ հարազատէ ի Սմբատայ. եւ եղեւ այն սուղ մեծ իւրայնոց զարմից» (էջ 383):

Ապուսէթ սպանութիւնը կատարուած է յետ չորից ամաց՝ այսինքն չորս տարի վերջ Գէորգ Գառնեցի կաթողիկոսին ձերբակալութենէն (արարներէն) եւ աղատութենէն վերջ, մօտաւորապէս 893-4 թուականին: Ասկէ չորս տարի վերջ կ'ունենանք 897-8 թուականը, որ պատմիչին համաձայն Ապուսէթ սպանութեան թուականն է՝ իր տոհմէն կամ հարազատէն Սմբատէ իսկ կատարուած:

Ապուսէթ եղբայրը կամ Գրիգորի «միւս որդին Սահակ, որ եւ Սեւադայ կոչեցաւ, այր քաջ եւ յաջող, սա առհասարակ տիրեաց Գարդմանայ եւ Քաւսայ եւ Փառնայ դաւառաց, այլ եւ աւաղակապետաց Զորոգետոյն բովանդակ եղեւ իշխան, եւ ինքորդ իսկ զբաղխութեան. եւ զըզրպապետս ի տան իւրում կարգեաց. ընդ որում եւ բազմաջան հնարիւք թագաւորն Հայոց Սմբատ մարտուցեալ ոչ ինչ կարաց ստերիւրել զնա ի կամս իւր: Սեւադայ ծնանի զերկուս որդիս՝ զԳրիգոր եւ զԳաւիթ. Գրիգոր ծնանի զՍեւադայ, որոյ իշխան անուն կոչիւր, եւ զԱտրնեբսեհ եւ զՓիլիպպէ: Իսկ զերէց որդին իշխանին (Սեւադայի) զՅովհաննէս, որ եւ Սենեքերիմ կոչեցաւ, ընտրեաց աջն Բարձրելոյն՝ կոչելով զնա ի թագաւորութիւն. եւ զվաղնջուց խափանեալ թագաւորութիւն Տէրն ամենակալ ի ձեռն նորա նորոգեաց, զոր եւ թագաւորն Պարսից մեծամեծ զարդուք պատուէ եւ տայ նմա զթագ հօր (Սահակ-Սեւադա) եւ զնորին երկվարն: Ի նմին ամի եւ որ Յունացն էր Մագիւս-

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

ԼԱՅՈՑ ԱՂՕԹԱՄԱՏՈՅՑԻՆ

(Շար. տես «Բազմավեպ» 1958, թ. 1-2, էջ 1)

8. — Աշտանակ. — Հինէն ի վեր ծանօթ էր Յոյներու եւ Արեւմուտցիներու, եւ Դ. դարէն ընդունուեցաւ եկեղեցւոյ մէջ եւս. այնպէս որ Կոստանդիանոս կայսրն առնոցմէ նուիրեց սուրբ տեղերուն՝ ոսկեղէն եւ արծաթեղէն. եւ ատոնց վրայ մոմեր կը վառէին, ինչպէս կ'երեւի եւ հին նկարներու մէջ: Եթերիա՝ Երուսաղէմի Յարութեան ու Խաչի տաճարներուն մէջ ալ կը տեսնէր «բազում մոմակալս» (Հեքստիալ. 514), որ էին հին աշտանակներ: Նոյններն ընտանի էին Հայերուն ալ, եւ Աղաթանդեղոս յիշեց Դ. դարուն Հովհաննիսի վկայութիւններու մէջ «եւ աշտանակօք բորբոքելովք»: Տեսանք ասելի

տրոս՝ Դաւիթ կոչեցեալ անուն, թագաւորմանապէս եւ ծիրանիս թագաւորական առաքել ի պատիւ եւ ի զօլեստ աստուածայաջող առն այնորիկ, որ եւ ի ձեռն հայրապետական աջոյն առնոյր զօծումն թագաւորական ի փառս Քրիստոսի» (էջ 389-90):

Նպատակ չունենալով մխրճուիլ այս իշխաններուն տոմարագրութեան մէջ՝ հոս այսքանով կը բաւականանանք: Միայն յիշենք որ Յովհաննէս-Սենեքերիմ մեռաւ 1003ին եւ կը յիշուի իբր քաղաւոր Փառխաւի:

Գալով Սահակ (Սեւադայ)ի մասին, պատմիչը կը դրուատէ անոր զբաղխութիւնը եւ մատենասիրութիւնը: Այս Սահակը յաղթուեցաւ Աշոտ Երկաթէն եւ 923ին կուրցուցին զինքը:

Յ. ՔԻՐՏԵԱՆ

(Շարունակելի)

ուշ Ն. Լամբրոնացիի յիշած «աշտանակս լուսոյ», որ կրնայ նաեւ գործածուած ըլլալ մոմիսականին աղբեցութեամբ, որուն հետ կը համեմատէ մերը, եւ ակնարկել բոլոր լուսատու անօթներու. թէպէտ կային դեռ իր օրով իրական աշտանակներ եւս, որոնցմէ նկարուած կը տեսնենք իր վերոյիշեալ աւետարանին զարդախորաններուն մէջ՝ զոյգ զոյգ, մին՝ մէկ, եւ միւսը՝ միւս կողմէն: Նոյնպէս եւ Նիկ. Մառ Անիի մէջ գտաւ «երկու պղնձեայ կռածոյ շարժական աշտանակներ»⁽³³⁾: Արդ զանազան աշտանակներ կը վառէին եկեղեցւոյ խորանէն դուրս, ինչպէս նկատեցինք:

Բայց կար անոնցմէ մէկը եւ խորանին մէջ, բարձրը մշտապէս լոյսին՝ որուն ակնարկեցինք, եւ որ մեծագոյն կարեւորութիւն ունէր: Յիշուած է Յ. Ոսկերբեանէն, որ նկարագրելով խորանին կազմածը, եւ համեմատելով աշխարհական տուններու հետ, ասելի պատուական կը գտնէ «աշտանակս քան զաշտանակն» (յն. լիւքնիա, ճրագակալ) որ կար ուրիշ տուներու մէջ. եւ անոր վրայ փոխանակ մոմեղէնի՝ զրուած էր ճրագ մը, որու «իւղով» հաւատացեալները կ'օծուէին՝ բժշկութիւն գտնելու համար (Մտթ. Ա., 495): Ըստ տեղւոյն ու նպատակին՝ կը յիշեցնէ մովսիսականը, «զիցեա զաշտանակն յանդիման սեղանոյն՝ ի կողմանէ խորանին ընդ հարաւ» (Եւր., Ի2, 35): Իսկ ըստ յօրինուածին՝ Մատթէոսի առակաւոր աշտանակը. «Ոչ լուցանեն նրազ եւ դնեն ընդ դրուանաւ, այլ ի վերայ աշտանակի» (Ե. 15). այսինքն մէկ ճրագ՝ փոխան մովսիս-

(33) Արարատ հնդ. 1911, 662:

եան եօթին: Թէպէտ անպիտան չմնաց այդ թիւը. այնպէս որ Ժ. դարուն բիւզանդական մանրանկարի մը մէջ, սեղանի մը հարակողմը կայ բարձր սիւն մը, եւ անոր բազմաստեղեան ջահ մը⁽³⁴⁾:

Ճրագակիր աշտանակի հետքերն անպակաս են նաեւ մեր քով: Օձնեցիին կարծրած Բ. ճառին մէջ կը նկարագրուի նոյնպէս խորանը, եւ զանազան մասերու հետ կը յիշուի նաեւ «աշտանակը» որով կ'օրինակուի «խաչն լուսոյ», եւ «ի վերայ նորա գունդ վառեալ», նշանակելով «աստուածութիւնն եօթնարկի շնորհօք» (140): Գունդը՝ ձէթի գնդաձեւ ճրագն էր, որով թարգմանուեր է նաեւ իր հոմանիշ յն. (լաւապառնի) (լապտերիկ) Զաքարիայի մէջ (Դ. 2, 34), եւ Ոսկեբերանի մէջ կը կարդանք. «յորժամ լոյս քաջ տայցէ գունդն եւ գտունն լուսաւորեսցէ, եթէ արարն բարի եւ բոլորակ իցէ», յիշելով եւ «գլխաւորոյն»: Այդ հայկական վկայութիւնը կ'ակնարկէ միակ աշտանակի մը բեմին վրայ, որ յիշուած է ուրիշ երկու անգամ եւս նոյն ճառին մէջ. «լապտերն հանապազորդեան ի տմա» որ է եկեղեցւոյ մէջ, օրինակ «մշտնջենաւոր պայծառութեան» սրբոց (134), եւ կամ «հանապազորդ վառումն լուսոյն» (140). եւ մշտավառ խորանին վրայ էր միայն: Ուղղակի կը մատնանշէ մեզ զայն եկեղեցւոյ նաւակառիքը, վառել տալով «նախ եպիսկոպոսն զխորանին» կանթեղը, նոյնպէս եղական, իմանալով անկասկած աշտանակին վրայ գետեղուած ճրագը: Մինչեւ ցարդ կը պահուի Հայաստանի մէջ, ըստ մեր լսածին, միագունդ կամ բազմաստեղե աշտանակ մը, դրուած տեղանին աջակողմը: Ատոր մնացորդն է անշուշտ զատկական մոմի բարձր աշտանակն ալ լատին եկեղեցիներու մէջ, սեղանին աջ կամ հիւսիսային կողմը:

Յայտնի չէ՝ արտաքոյ խորանին դրո-

ուած ձէթի ճրագնե՞ր էին, ատոր պէս, թէ մոմեր՝ նման արեւմտեայ: Բայց մոմեղէններու անյիշատակութիւնը եկեղեցւոյ լուսատու սրահներուն մէջ մեր հին վիկաներուն կողմանէ՝ կասկածիլ կու տայ անոնց դոյութեան վրայ. եւ շատ հաւանօրէն ճրագներ էին բոլորն ալ: Յետոյ մը տաւ մոմերու սովորոյթը արտաքին աղբեցութեամբ, որով կ'երեւին Լամբրոնացիին աւետարանի աշտանակներուն վրայ եւս:

Աշտանակի ձեւերը զանազան են հնութեան մէջ, նոյնպէս եւ հայ գրչագիրներու մանրանկարներուն մէջ: Ամէնէն որոշ մասն եռոտանութիւնն է պատուանդանին ներքեւ, ինչպէս ունին Լամբրոնացիին եւ ուրիշ մանրանկար մը Ժ. դարէն, յառաջ բերուած Գար. արք. Յովսէփեանէ⁽³⁵⁾: Հինքու ոսկեղէն եւ արծաթեղէն աշտանակներուն քով՝ Անկիւրիոյ վանքին յիշատակագիրը կը պատմէ նուիրուած նոյն ուխտին՝ 1447ին՝ «երկու մումնկալ ի փայտից շինած», եւ ուրիշ «երկու մումնկալ փայտէ՝ սուրբ սեղանին»⁽³⁶⁾: Կ'երեւի թէ փայտը շատ յարգի էր նոյն քաղաքին մէջ:

9. - Մումնկէն. - Հինէն ի վեր բազմակերպ եղեր է անոնց կիրարկութիւնը թէ՛ միւս քրիստոնեաներու⁽³⁷⁾ եւ թէ՛ մեր քով. եւ սովորաբար արարողութեանց մէջ կ'երեւին անոնք: Այսպէս կը յիշէ Փաւլոստոս ննջեցելոց յուղարկումը «կանթեղօք եւ մումնկիւնի լուցելովը» (229), եւ Ս. Վրթանէսին՝ կատարուած նոյնպէս «կանթեղօք եւ մումնկիւնի» (28): Կը խառնուին դարձեալ զանազան արարողութեանց⁽³⁸⁾ մէջ, ինչպէս նաեւ ուխտադնացութեանց եւ այլն, որ կապ չունին մեր նիւթին հետ. մեղի կարեւորն է հասարակաց աղօթքի մէջ գործածութիւնները: Չուղեցինք տեսնել զանոնք նախկին դարերուն եկեղեցւոյ աշտանակներու վրայ. բայց միջին դար-

րուն յայտնապէս կ'երեւին եւ ժամերգութեանց մէջ, եւ յատկապէս հանդիսական օրերուն: Այսպէս 1284ի Աւետարանացոյցը կը գրէ՝ թէ Աստուածայայտնութեան ճրագը կ'ընէր կանոնագրի փառքն երգելու պահուն եւ Զատիկի ճրագալոյցի Լուսաւորեաց ընթերցումին «տան մումնկէն ի ձեռս ամենեցուն», կրկնուած նաեւ 1438ի եւ այլ Տօնացոյցներէ: Զատիկին Դանիէլի ընթերցման ժամանակ «տան... մումնկէն երկու ի ձեռս քահանայից»: Եւ Վերափոխման կիրակամուտի Լոյս գրքը երգելու կու տայ «մումնկիւնի լուցելովը»: Անոնք անպակաս էին նաեւ թափօրներու մէջ, զորս պիտի տեսնենք իրենց կարգին:

Շատ սովորական էին մոմեղէնները նաեւ աւետարանի ընթերցման առթիւ: «Ընդ ամենայն եկեղեցիս արեւելից, կ'ըսէ Ս. Հերոնիմոս, յորժամ աւետարան ընթեռնուցու, վառին մոմեղէնք՝ մինչդեռ չողջարեգակն. ապա ոչ առ ի զխաւարն փարատելոյ, այլ ի յայտ առնել զցնծութիւն». եւ թէ նոյն սովորոյթն յետոյ կ'անցնի նաեւ արեւմուտք⁽³⁹⁾: Իսկ մեր քով անոր յիշատակութիւնն ունինք Մաքենեաց խորաններուն մէջ, թէ իւղաբերից աւետարանը կը կարդան «երկու զապտեբոք» (Յաւ. Ա.): Թէ այս բառը հոմանիշ է մոմեղէնի, յայտնի է եկեղեցւոյ հիմնարկէքի նկարագրութեանէն, ուր Ժ. դարու Մաշտոցը կը գրէ՝ թէ «առաջի երթալով ուխտին մումնկիւնի վառելովը», եւ կարծեցեալ Օձնեցիին՝ թէ «ուխտն առաջի երթալ զապտեբոք» (121): Իսկ Ս. Լամբրոնացին մումնկէն կ'ըսէ միշտ (Պար. 84, 198): Գր. Տաթեւացին փոխանակ զապտեբոքն՝ կը զնէ աւետարանին քով «զամպարն վառեալ», զոր ինքն իսկ կը պարզէ հոն, ըսելով՝ թէ «մոմ վառեմք» (Հրց. 664): Այսպէս եւ «կարգ մեկն. ժամու աղօթից» կը յիշէ «զամպարացն վառումն առաջի աւետարանին», եւ թէ «չորս զամպար» կը վառէին ի խորհուրդ չորս աւետարանիչնե-

րուն (311): Համբարը յունական լամպասն էր, ընդունուած դասական հայերէնէն, որ եւ կը թարգմանէր նոյն յունարէնը⁽⁴⁰⁾ զապտեբոքն պէս, բայց միշտ բոցաւոր ջահի իմաստով: Միջին դարն էր որ մոմեղէնի նշանակութիւնը տուաւ անոր, ըստ որում մոմեղէնն ալ ջահի կամ զամբարի մէկ տեսակն էր: Թէ այդ շրջանին աւետարանին քով մոմ կը բռնուէր՝ եւ ոչ ուրիշ սպաս, վկայ է Երուսաղէմի վանքի 1262ի աւետարանին նկարն ալ, որ Կեռան իշխանուհին անաշտանակ մոմով կանգնած է աւետարանին քով՝ որ կայ ամուսնուն՝ Լեւոնի ձեռքին մէջ⁽⁴¹⁾:

Եկեղեցւոյ մէջ հաստատուն մոմավառութեան առիթ մ'էր Աւագ ուրբաթու հսկումի աւետարաններու ընթերցումը, որուն սկսելէն առաջ «լուցանեն մոմեղէն սուրբ», կը գրէ 1284ի Աւետարանացոյցը, եւ զոր 1438ի Տօնացոյցը կը փոխէ այսպէս. «լուցանեն ջահս». իսկ 1449ին եւ յաջորդները՝ «լուցանեն ջահս եւ մոմեղէնս»: Բայց Ժ. դարուն արդէն ընդարձակուած է մոմեղէններու կիրարկութիւնը՝ ըստ վրկայութեան Թովմա Մեծօփեցիի, որ Լէնկթիմուրի պատմութեան մէջ (իբր 1440ին) կը խօսի Յովհաննէս անուն արեւելայի մը տեսիլքի մասին, ուր «ժամատունն լուսով լապտերաց մումնկիւնի պայծառացաւ» (36), եւ ուր ունինք երազականէն աւելի իրական պատկեր մը:

Իսկ ձեռքի մէջ բռնուածները երկար են, եւ 1248ի նկարին մէջ՝ զոր յիշեցինք՝ սարկաւազներուն բռնածները, նոյնպէս եւ Կեռանին՝ դէպի վեր կը սկսին նրբանալ:

10. - Զահ. - Ոսկեղարեան լեզուին մէջ մէկ տեսակն էր աս՝ ճարպոտ լարերէ շինուած կանթեղին կամ զամբարին, ծանօթ արտաքին կիրարկութեան մէջ. Յոյներու տայսը կամ Հոմաթեցիներուն փախը. եւ ամէնէն մեծաբոցն էր, կազմուած ըլլալով խժային փայտերէ կամ խուրճերէ: Այս ի-

(34) Շիւմբերգէր, *Ерорée byz.* 621:

(35) Իգմատիոս մանրանկարիչ, 33:

(36) Գրիգ. 1103 Ս. Ղազարոս, 22, 63:

(37) Կարբու, Գ, 1613-22. տես եւ Դարեմբերգ, Ա, 869:

(38) Հայապատում, 230:

(39) Հայրախ. լատին. ԻԳ, 345, 361:

(40) Յոր, ԽԱ, 10. Նաւում, Բ, 4 եւն.:

(41) Հացունի Հ. Վ. Պատմ. հայ տարագիր:

մաստով Ս. Գրքի մէջ կը թարգմանէ յաճախ յն. լամպար, նման դամբարին, բայց սաստկագոյն նշանակութեամբ մը: Գեղէնի տօրքը գիշերուան մէջ ցուցնելով «զախսն» կը սարսափեցնեն թշնամիները (Դատ. Է, 16, 20): Սամփոն ջահեր կը կապէ աղուէսներուն ձեռներուն եւ կ'այլոյն ալաղդիներու ալիքները (անդ՝ ԺԵ, 4, 5): Հայ թարգմանիչը Բեռնարդուսցոյ աշտարակներուն վրայ վառել կու տայ «ջահ» փոխանակ բնագրի «կրակին» (Յեղթ. Է, 5): Եւ Յուդա Հրեաներու հետ բռնելու կ'երթայ Յիսուսը՝ «ջախիւք» (յն. փանոս) եւ «լապտերօք» (ՅՏ. ԺԸ, 3):

Նոյն գործածութիւնը կը տեսնենք նաեւ մեր սովորութեանց մէջ. Հոփսիմէի դահլիճները ձերբակալելու կ'երթան դայն, «եւ ջախի լուցեալք առաջի նոցա» ըստ Ագաթանգեղոսի (155): Մաշթոց յուղարկուեցաւ, կ'ըսէ Կորիւն, «կանքեղօք վառելովք եւ ջախիւք բորբոքելովք» (27), երկուքն ալ դասակարգ: Եւ Ագաթանգեղոս կը պատմէ հայ ժողովուրդի Եփրատի մէջը տուրքէն դարձը գէպի եկեղեցի՝ «կանքեղօք վառելովք եւ մոմեղիւք լուցելովք եւ ջախիւք բորբոքելովք» (622), նոյնպէս համասեռի առաջինները՝ ճարպէ կամ ձիւթէ, միջինները՝ մոմէ, եւ վերջինները՝ խուրձէ: Այդ իմաստով Ստ. Օրբելեան եւս իր հօրեղբոր Սմբատ իշխանին թաղումը կը դնէ «ջախիւք եւ մոմեղիւք» (307):

Միջին դարը այս սպասին ալ տուաւ նոր նշանակութիւն մը, անոր անունն ու փայլը անցընելով եկեղեցական բաղամարդ կանթեղին, որու կազմն ալ աւելի հին ըլլալու չէ մեր քով, մինչ արեւմուտցիները վաղուց կը ճանչնային դայն. եւ Ե. դարու առաջին քառորդին Ս. Պաղիսոս Նոլացի կը խօսի այսպիսի ջահերու մասին, զարգարուած ապակեայ սկահաձեւ ճրագներով. իսկ Լիլերկ առաջ կը բերէ անոնցմէ արուեստական հին ձեւերը⁽⁴²⁾: Շքեղ օրինակներ պակաս չեն եւ մեր անցեալին մէջ: Գուրգէն թագ. Բագրատուն-

նի, Ժ. դարու սկիզբը շինել տուաւ ասոնցմէ երկու հատ՝ Սանահնի եկեղեցւոյն համար. եւ ինքն իսկ կը նկարագրէ զանոնք իր յիշատակարանին մէջ: Առաջինը «ջախ մի, ունելով յինքեան կանքեղս ձժԲ», ինչպէս կը կոչէ ճրագները՝ որ կը վառէին «ձիթով»: «Եւ ջախս այս ճախը առեալ ի գմբեթ կաթուղիկէիս»: Իսկ երկրորդը՝ «Հափաւոր ջախ մի այլ յանուն սրբոց Բառասնիցն, ունելով յինքեան կանթեղս ըստ թուոյ նոցա... Եւ ջահս այս պայծառացուցանէ զգաւթ Սր. Աստուածածնիս եւ զսուրբ կաթուղիկէիս Սանահնոյ» որ իր հայրերուն հանգստարանն էր: Առաջինը կը վառուէր պատարագի ժամանակ, եւ դաւիթը՝ «ի մէջ դիշերի»⁽⁴³⁾, ժամերդութեան առթիւ:

Նշանաւոր էր դարձեալ Անիի կաթուղիկէին գմբեթէն կախուած «պըլօր (բիւրեղեայ) կանթեղն», - ինչպէս փոխաբերաբար կը կոչէ Ուսահայեցին ջահը, - «զոր Սմբատ տիեզերակալ (իրը 989ին) էր բերել տուեալ ի Հնդկաց՝ ընդ բիւր մի դանձուց. երկուստասան լիտր էր կշիռ նորա, եւ նոյն չափովն երկուստասան լիտր տանէր», այսինքն նոյնքան իւր: Այդ չքնաղ զարդը Թուրքերը 1064 թուին քաղաքին առման պահուն խորտակեցին գետին (179): Շնորհալին կանթեղի առակին մէջ կը նկարագրէ ջահը. «Ճերմակ ձի գաւեղ ու գէր». ճերմակ՝ որովհետեւ արծաթեայ, եւ գէր՝ լայնութեան համար: «Աչեր սպիտակ փայլուն ունէր», որ էին ճրագները. «Եւ յունելեաց բարձեալ յերից», սովորական լարերը. «ճորտն զպահուրցն կու քաշէր», որ էր առաստաղին հանող չոսանը, եւ «խրինջալով ի վեր վազէր» (752):

Սմբատ սպարապետ իր ընթերցողներուն ուշադրութեան կը յանձնէ նոյն հայրապետի յաջորդին՝ Գրիգոր Տղայի «գմեծ լուսակալն արծաթի» զոր շինած էր եւ «կախեալ ի գմբեթն Սրբոյն Գրիգորի» որ իր դաստակերտն էր (Տրդ. 115): Ն. Լամ-

բրոնացին կը բացատրէր՝ թէ «զինչ յայտ առնեն լուցմունք ջախիցն եւ լապտերացն» եկեղեցւոյ մէջ (Պար. 131): Եւ ճառն «խորհուրդ եկեղեցւոյ» կը զգացնէ այս անօթին խառնուրդը կանթեղեաց հետ:

Նիկ. Մառ Անիի Ս. Գրիգորի մէջ զբտաւ երկու ջահեր, որոնցմէ մէկը ուշադրաւ է, եւ Որբելի կը նկարագրէ զայն այսպէս. «Պղնձեայ մեծ ջահը (ԺԱ. դար) Գաղիի տաճարից, թաղի ձեւով, չորս կողմից թռչող աղաւնաձեւ ճրագակալն երով, եւ թաղի մէջտեղում բարդ ձեւի մի դամբարնով: Այս ջահն ունէր մօտ 120 դոյնըզոյն ապակեայ դամբարներ, որոնք մեծ մասամբ դանդաղ են, բայց բոլորը կոտորուած»⁽⁴⁴⁾: Իր պսակին նմանութիւնը՝ շուրջանակի վրայ երկաձեւ եւ մէկ կեղերոնական ամբաստանիքով կ'երեւի Անույ Շարփին մէջ (Թ. 3, էջ 41):

Կայ ուրիշ մ'ալ՝ յայտնուած Վայոց ձորի մէջ եւ այժմ էջմիածին, զոր կը նկարագրէ Գար. Վրդ. Յովսէփեան, եւ պատկերը կայ Տարաղի մէջ⁽⁴⁵⁾: Պղնձէ ձուլածոյ զործ է. բունը անօթ տափաձեւ, եւ շուրջանակի վրայ ստուար կարկառուն ստեղծեր, որ կ'աւարտին բոլորակ ու վեր նայող բերաններով: Իր կեղերոնի ծակէն կ'ընդունէր իւրը, որ կը տարածուէր պատրոյղներուն: Ունի երեք կանթեր ստեղծներու արմատներուն մօտ, որոնցմէ կը կախուէր:

Հայ դաղութները օտարներէն սորվեցան նաեւ մոմակիր ջահերու ծանօթութիւնը: Յայտնի չէ՝ թէ Մեծոփեցիի վերեւ յիշած մոմերու բաղմութիւնը ինչ անօթներու վրայ կը վառէին: Այսպէս Անկիւրիոյ վանքին յիշատակագիրը կ'աւանդէ՝ թէ 1478 թուին Սոճայ Սաֆարչան ոմն «երկու ջախ շինեաց՝ Սր. Աստուածածնին սր. սեղանին մոմակալ. պատարագի աւրն վառեն ըզջահն» ի ներկայութեան ընծայողին ընտանեաց: Այդ զոյգ մը մոմաբարձ ջահերու յաւելումը խորանին մէջ՝ խանդա-

րումն էր միակ ճրագի նախկին ոճին, բայց աղբեցիկ անձերու հաճոյակատար ըլլալու տկարութիւնը յաճախ աւելի կը զօրէ ակեղեցիներու մէջ՝ քան արարողական ճշդութեան հարկը:

11. - Բով կրակի. - Փակակալին դործերէն մէկն էր, ժամերդութիւնը չսկսած՝ խնկել եկեղեցւոյ մէջ: Յատուկ սպաս մը կար ատոր համար, որուն կ'ակնարկէ Ժ. դարուն Ստ. Ասողիկ, պատմելով ցնորած մարդու մը մասին՝ թէ Առաւօտեան աղօթքի պահուն «եւեալ բառնայր գրով կըրակին՝ որով զխունկն բուրացուցանէին» (Գ. իթ): Նոյնպէս եւ ճառը «Պորհուրդ եկեղեցւոյ» կը յիշէ նոյն սպասն ու կ'ընէ «հրառան... իսկ հուրն ի նմա արկեալ... իսկ խունկն ի ներքս ծխել»: Ասոնք ծանօթ էին նաեւ արեւմուտք, եւ Լիլերկ կը յիշատակէ զանազան ձեւեր, ինչպէս բնաւոր տապակի, եւ այլն⁽⁴⁶⁾:

12. - Խնկանց. - Այն տուին էր՝ ուր կը պահուէր խունկը, եւ անկէ հետզհետէ կ'անցուէր բուրվառին մէջ: Ագաթանգեղոս Գրիգորի բերանը կը դնէ. «Խնկանցն զօրինակ սուրբ կուսին Մարիամու ունէր» (319), ակնարկելով Մովսէսի հաստատած բուրվառին, որ զատ էր մեր խնկանոցին նշանակածէն, եւ զոր ոսկեղարը խնկանցն կոչած է Բ. Մնացորդաց մէջ եւ զանազանաձեւ բուրվառէն (Դ. 22): Ուշադրանք կը յիշէ հայրապետանոցին սպասները Մովսէս կաթողիկոսի օրով, որոնց մէջ կը գատէ նոյնպէս «խնկանցս եւ ըզբուրվառս» (Բ. լր): Օձնեցիին կարծուած Բ. ճառը կը կրկնէ Ագաթանգեղոսի համեմատութիւնը, բայց խնկանցն առնելով նոր իմաստով, եւ զանազանելով ինքն ալ բուրվառէն (140): «Պորհուրդ եկեղեցւոյ» ճառը, հետեւող առաջինին, աւելի յստակօրէն կ'ըսէ. «որպէս խունկն ի տփի, այսպէս ծածկեցաւ Աստուածութիւն ի մարմնի» փրկչին: Ս. Ն. Լամբրոնացի անոր կու տայ խնկակալ կոչումը, զոր սարկա-

(44) Արարատ ամս. 1911, 669:

(45) Տարաղ, 1908, Յնր. 8:

(46) Կարբու, Ե, 27, 29-32:

(42) Կարբու, Դ, 1727-28, 4-6:

(43) Հայագրատում, 288-89:

ւազը խնկարկու քահանային քով կը բռնուէր (Պար. 198)։ Իսկ երբ խնկարկուն սարկաւազն էր, իր ձախին մէջ կը բռնէր խնկանոցը, ինչպէս քանդակուած է Ս. Ստեփանոս Բ. Կոստանդինի պահարանին վրայ՝ 1293 թուականին⁽⁴⁷⁾։

13. - Բուրվառ. - Խնկարկութեան ըստ պատմէր ասիկա, ընդհանրական եկեղեցւոյ մէջ, առնուած հրէականէն, եւ արդէն Դ. դարէն սկսեալ ունի իր զանազան վկայութիւնները եւ օրինակները, գլխաւորապէս յուղարկաւորութեան ու պատարագի մէջ, եւ դէպի միջին դար նաեւ ժամերգութեանց առթիւ⁽⁴⁸⁾։ Կան անոր յիշատակութիւնները Դ. դարէն նաեւ մեր քով, յատկապէս յուղարկաւորութեանց մէջ՝ ըստ Փաւստոսի (229) եւ Կորինթի (25, 27)։ Կ'ականարկեն անոր Յաճախապատումը (65, 119, 122), Ներսէս Աշտարակեցիի կանոնները (ԺԵ) եւ ուրիշներ։ Հասարակաց աղօթքի մէջ եւս կը կիրարկուէր, եւ Մաքենեաց Խորատները Իւղարքերից աւետարանին ընթերցումը կը դնեն «բուրվառով» (Յաւ. Ա.) եւ Տաթեւացիի կ'ըսէ՝ թէ նոյն պահուն «բուրվառ շարժմաք» (Հրց. 644)։ Խնկարկութեանց բազմութիւն մը պիտի տեսնենք Աշխատութեան Գ. մասին մէջ։

Նկատմամբ անոր նիւթին՝ Թովմա Արծրունիին քով կը կարդանք՝ թէ իրենց Գաղիկ իշխանը Ս. Գէորգ եկեղեցին կը զարդարէ «բուրվառօք արծաթեղինօք» (248)։ Իսկ ըստ Վարդան վարդապետի վկայութեան՝ Սաղմոսաց մեկնութեան մէջ՝ «նիւթ բուրվառին (էր) պղինձ, ոսկի, արծաթ, երկաթ» (Սղմ. ՃԽ)։ Կըրկնուած եւ Գր. Տաթեւացիէն, «ոսկի, արծաթ կամ երկաթ» (Սղմ. 288)։ Նիկ. Մառ Անիի աւերակներուն մէջ գտաւ զանազան բուրվառներ աւետարանական պատկերներով քանդակուած⁽⁴⁹⁾։ Անոնց

ձեւերէն լոյս տեսած են այլեւայլ տպագրութիւններու մէջ⁽⁵⁰⁾։ Չորս զրչազրական պատկերներ եւս Հայ տարազի պատմութեան մէջ՝ 1293, 1356, 1730 եւ 1837 թուականներով (351, 354, 367, 357)։ Եւ հինգերորդ մ'ալ Հ. Ալիշանի Այրարատէն՝ 1448ին գծուած (353) որոնք առ հասարակ սկահաձեւ են, կամ «բուրվառ» ըստ Տաթեւացւոյն (Հրց. 645), եւ շատ նման եղիպտական օրինակներու՝ զորս յառաջ բերած է Լիլիբրն։ Յիշեալ վարդապետը անոր բերանը «խոռ» մը նշանակէ (Սղմ. 488), ինչ որ անտեսանելի է. դուցէ տափարակ ու ծակոտկէն ափսէի ձեւով էր։ Կը զարտուղի մեր յիշած 1837ի օրինակը, նուրբ մարմնով ու կոնաձեւ խոռովով, որ նմանութիւն է եւրոպականին։

Անոր յօրինուածին մանր մասերուն մէջ ալ մտեր են մեր նախնիք, որոնց կոչումներն հետաքրքրական են։ Գլխաւորն է «ներքին կառոյցն»՝ ընդունարան կրակի, ինչպէս կ'անուանեն Վարդան վրդ.⁽⁵¹⁾ ու Գր. Տաթեւացի (Հրց. 645), եւ որոնց վրայ կային «երեք ստեղծումք», կ'ըսէ «Խորհուրդ եկեղեցւոյ», որոնց կառչած ի վեր կը բռնէին «երեք ամբառնալիք» ըստ կեղծ Օմնեցիին (141), կամ «չուանք բառնալիք» (Վրդն.) կամ «երեք չուանք» (Տաթ.) որ կը յարէին ի «շուշան» (Խորհուրդ եկեղ.) կամ ի «վերին ագոյցն» (Վրդն. եւ Տաթ.) եւ անոր վրայ «ըմբռնելիքն ի վերին ծայրն» (Տաթ.)։ Մանր «գանգակներ» ԺԲ. դարէն կը զարդարէին անոր ամբառնալիքը՝ ըստ վկայութեան Միս. Գոչի⁽⁵²⁾ եւ Տաթեւացիի, որ չորս չորս կը նշանակէ իւրաքանչիւրին վրայ, ինչպէս ունին 1331ի⁽⁵³⁾ եւ վերոյիշեալ 1730ի մանրանկարները. եւ երեք երեք՝ 1837ինը։ Զանգակներ կան մինչեւ այսօր Յունաց, Ասորոց ու Ղպտիներու բուրվառներուն վրայ եւս։

մեծափրկիչը. 41. Տաթեւացի. 1909, Թ. 1, էջ 8։

(51) Մեկն. սղմաց. ՃԽ։

(52) Արարատ ամս. 1900, 562. 1901, 61։

(53) Ա. Զօպանեան, Վարդենիք, Բ, 274։

14. - Գրակալ. - Հին եւ երկաթադիր ստուար մատենաները կարդալու համար դիւրին չէր ձեռքի վրայ բռնել, այդ պատճառով հնարուեցաւ գրակալը, որ կը յիշուի ՅԿ. Ոսկերեանէն. «գահոյքս (յն. կլի'նէ) այս աղնուադոյնք, զի աստուածեղէն դրոց հանդիստ քան զամենայն գահոյս հեշտական» (Մտթ. Ա., 495)։ Մեր հին գրիչները շատ չեն դադարած այս սպասով. եւ հազիւ մանրակրկիտ Տաթեւացին ուշ դարձուցեր է անոր, եւ տուեր կարեւոր ծանօթութիւն մը։ Հարկաւոր է նկատել նախ թէ հին կտակարանները եւ առաքելական թուղթերը նստած կը կարդային, եւ աւետարանները կանգուն, ինչպէս պիտի տեսնենք մեր Գ. մասին մէջ։ Ըստ այդմ նաեւ երկու տեսակ գրակալ կար, ցած ու բարձր։ Առաջինին օրինակներուն շատ կը հանդիպինք գրչագիրներու նկարներուն մէջ, բայց ձեւերու մեծ զանազանութեամբ մը իրարմէ, այնպէս որ չենք կրնար վստահ ըլլալ՝ թէ բոլորն ալ իրականէն առնուած են։ Մեր քով հնագոյն օրինակներն ունինք Մլքէ թագուհիի աւետարանին մէջ՝ 902 թուականէն, (այժմ ի Ս. Ղազար), երկու աւետարանիչներու քով՝ որ նստած են, եւ մէկ մէկ գրակալ իրենց առջեւ, Մատթէոսին առիւծադուխ, եւ Մարկոսին՝ արծուեղուխ։ Այս տեսակ նմանութիւններ կ'երեւին նաեւ բիւզանդական եւ արեւմտեան գրչագիրներու մէջ։ Եւ որ աւելի կարեւորն է, արեւմուտքի ամբիոններու գրակալներն ալ զարդարուած են նոյնպիսի ձեւերով միջին դարէն, ինչպէս նկատեց Ստրիկովսկի⁽⁵⁴⁾ եւս։

Հայկական հնախօսութեան համար թանկագին է Նոր Նախիջևանի գրակալը աւետարանի համար, շինուած 1272ին՝ «պարոն Գրիգորէ», որուն պատկերն ալ տուաւ Գ. Յովսէփեան⁽⁵⁵⁾։ Կազմուած է երկու տախտակներէ, որոնք արտաքուստ նրբօրէն քանդակուած են, եւ վերին մասերուն մէջ կան երկու խաչեր՝ նստած մէկ

(54) Հանդ. Ամս. 1905, 36։

մէկ առիւծի վրայ։ Նման է ասոր եւ այն զոր 1397ին կը նկարագրէ մեզի Տաթեւացին, այսպէս. «մի տախտակն յերկուս բաժանեալ» որ է երկու տախտակներ իրարու հանդէպ, «եւ հնդիւք փակեալ»։ այս ինքն հինգ տախտակներով փակուած երկուստեք։ Անոր վրայ կային «զանազան նկարք» փոխանակ քանդակներու, որոնց մէջ նաեւ «նշանակ խաչին» ինչպէս նախորդին։ Եւ հուսկ «ծածկոյթ» մը գրակալին վրայ, եւ անշուշտ նեղ, որպէսզի չփակէր զարդերը. ինչպէս պիտի տեսնենք ստորեւ եւ բազմոցին վրայ։ Տաթեւացին կը զգացնէ՝ թէ ընթերցողը միշտ ժողովրդեան կը դառնար, ինչ որ բնական էր։ Կը յարէ դարձեալ՝ թէ «այլ աղդք միշտ ի վերայ գրակալին պահեն զգիրս» (Հրց. 646) տալով իմանալ՝ թէ Հայերը ընթերցման պահուն միայն դուրս կը բերէին գրակալը, եւ ապա կը տանէին։ Ուրիշներու անշարժ գրակալները թերեւս ամբողջութեամբ վրայ հաստատուածները կը հասկնար։

Բարձր գրակալները կը գործածուէին ստուար եւ ծանր հատորներու համար, երբ անոնցմէ կտորներ պիտի կարդացուէին, ըստ սոներու։ Բայց կ'երեւի թէ Իւղարքերից չորս աւետարանները առանձին օրինակուած էին, որով ըստ Մաքենեաց Խորատներու ընթերցող քահանան զայն կը բերէ «ի գիրին», անով կը խաչակնքէ ժողովրդեան վրայ եւ կը կարդայ. եւ գրակալի պէտք եւ ակնարկութիւն չկայ հօդ (Յաւ. Ա)։

15 Բագմալ. - Եթերիա ուխտաւորը կը պատմէ՝ թէ աւագ ուրբաթ օր Գողգոթայի վրայ կատարուած պաշտամունքի պահուն «նստի եպիսկոպոսն յաթոռ, դնի առաջի նորա սեղան կտաւաքող», եւ անոր վրայ կը դետեղէին տէրունական խաչափայտը, որուն բովանդակ ժողովուրդը մէկիկ մէկիկ կը մատչէր համբուրելու (530)։ Նոյն սովորոյթն ու սպասները կային նաեւ Հայոց մօտ, որու երիցագոյն

(55) Պաղարկեանք կամ Պոռլեանք, 163։

(47) Ալիշան Հ. Ղ. Սիսուան 107։

(48) Կարբուլ, Ե. 21-33, 18։

(49) Արարատ ամս. 1911, 661-67։

(50) Գ. Եպս. Յովսէփեան, Հայոց Թառու Ա-

